



ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Առողիտորական Խորհրդատվական Ընկերություն

Առողիտորական Գործունեության Լիցենզիա Թիվ 006

ՀՀ, Երևան, Խորենացի 47/7 բն.46, հեռ/ֆաքս+3741577544

Էլ. Հասցե՝ auditservicellc@gmail.com, Էլ. Կայք՝ <http://www.auditservice.am>

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

<<ԱԳՐՈՒԴՁԵԼՁ ԼՎԿ>> ՍՊԸ ՄԱՍՆԱԿԵՑՆԵՐԻՆ

Ք. ԵՐԵՎԱՆ, 26 ՄԱՅԻՍԻ 2017Թ.

Մեր կողմից իրականացվել է <<Ագրոլիզինգ լիզինգային վարկային կազմակերպություն>> Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներն ու այլ բացատրական տեղեկատվություն:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումներից:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների

վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել և անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ընկերության ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ԿԱՐԾԻՔ

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2016թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ագրոլիզինգ լիզինգային վարկային կազմակերպություն» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալում փոփոխությունները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

<<ԱՌԻԴԻՏ ՄԵՐՎԻՄ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝

ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ԱՌԻԴՏՈՐ

ԳՈՌ ԴՄՎԹՅԱՆ